Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ, Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՆԻՆ ԵՎ ԵՐՎԱՆԴՈՒՆԻՆԵՐԸ

Երվանդ արքան՝ Հայաստանի նախկին սատրապ Օրոնտեսը, մ.թ.ա. 331թ. Գավգամելայի ճակատամարտից հետո վերականգնելով Հայաստանի անկախությունը, իրագործել էր նաև երկրի պաշտպանունակության ամրապնդմանն ուղղված շինարարական աշխատանքներ: Դրանք ծավալվել են նաև Անիում: Անիի հնությունների վերաբերյալ արտահայտված մտքերից բերենք Հ.Մանանդյանի հետևյալ տողերում ամփոփվածը. «Մեր նոր եզրակացությունները, Երվանդաշատի, Երվանդակերտի, Արմավիրի և Գառնիի հուշարձանների մասին կարող են նոր լույս սփռել նաև Անիի Կամսարականյան կոչվող պարսպի հնագույն որմածքի վրա: Այս վերջինը ևս, ինչպես և Արմավիրի վերոհիշյալ պարիսպներն ու աշտարակը, վերաբերում է, ըստ երևույթին, հայկական ճարտարապետության Երվանդյան ժամանակաշրջանին, այսինքն՝ 3-րդ դարի կամ 2-րդ դարի սկզբներին մեր թվականությունից առաջ»:[1] Բնորոշ է այն հանգամանքը, որ Անիում Կամսարականների ամրոցի պարսպի մեջ կան «ծիծեռնակապուչ» կապերով քարերի երկրորդ օգտագործման դեպքեր:[2] Սա մեզ հուշում է, որ երկրորդ օգտագործումը եղել է Անի ամրոցի՝ Արտաշեսի (ապագա Արտաշես 1-ին, մ.թ.ա. 189-160թթ.) զորքի կողմից ավերվելուց հետո: Այս դեպքում զուգահեռ կարելի անցկացնել նրա և Արմավիրի տաճարի ավերման միջև: Ըստ Ժ.Խաչատրյանի, Արմավիրում որոշ «ծիծեռնակապուչ» կապերով քարերի կրկնակի օգտագործման փաստը, (դրանց երկու երեսին արված փորվածքների չափերը և խորությունները տարբեր են) վկայում է, որ «հելլենիստական տաճարի շենքը (մ.թ.ա. 3-րդ դ.) գուցե Երվանդի և Արտաշեսի կռիվների ժամանակ վնասվել է կամ քանդվել է և վերականգնվել է մ.թ.ա. 2-րդ դ., նույն տեխնիկայով»:[3]

Ասվածները հիմք են տալիս եզրակացնելու, որ Երվանդը նորանկախ թագավորության մայրաքաղաք Արմավիրի հետ միասին, միևնույն ժամանակ կառուցապատել է Անին, ընդ որում ելնելով ոչ միայն պաշտպանական նկատառումներից: Անին ոչ միայն հենակետ կարող էր ծառայել հյուսիսից ներխուժող բարբարոս ցեղերի դեմ, այլև կարող էր դառնալ ամառանոցային թագավորանիստ, որովհետև, ի տարբերություն շոգ Արարատյան դաշտում գտնվող և ջրի պակաս ունեցող Արմավիրի,[4] Անին գտնվում էր զով Շիրակում՝ ջրառատ Ախուրյան գետի ափին: Բայց միայն դրանցով չի կարելի բացատրել Անիի նկատմամբ Երվանդ թագավորի ցուցաբերած հոգատարությունը: Անին Մայր դիցուհու պաշտամունքի նշանավոր կենտրոն էր, իսկ Երվանդունի արքայատոհմի նախնիները սերված էին համարվում Մայր դիցուհու երկվորյակ որդիներից: Խոր նախնադարում ձևավորված և Երվանդունիների անկումից հետո որոշակի աղճատման ենթարկված համապատասխան առասպելը առկա է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ: Երվանդ Վերջին թագավորի առթիվ մեր պատմահայրը գրում է. «Եւ ունին զրոյցք յաղագս նորա այսպէս: Կին ոմն յազգէ Արշակունեաց, անճամբ հարստի և խոշորագեղ, վարար, զոր ոչ ոք դիմագրաւեաց առնուլ կնութեան, ծնանի երկուս մանուկս յանկարգ խառնակութենէ, որպէս Պասիփայէ զՄինոտաւրոս:

---

[1] *Մանանդյան Հ., Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Եր., 1946, էջ 33:*

[2] *Խաչատրյան Ժ., Մենումենտալ կառույցի մնացորդներ և ուշագրավ ծեսով թաղում Արտաշատից, ՊԲՀ, 2005, թիվ 2, էջ 229:*

[3] *Նույն տեղում, էջ 228:*

[4] *Մովսիսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց, Եր., 1981, գիրք Բ, գլուխ լթ:*

Եւ ի զարգանալ մանկանցն՝ կոչեն անուանս Երուանդ եւ Երուազ»:[5] «Սասնա ծռեր» դյուցազնավեպի երկվորյակների մոր (Ծովինար) նման, Երվանդի և Երվազի մայրը ևս Մայր դիցուհու կերպարի մի տարբերակն է՝ պահած անգամ նախնադարից եկող և իրեն բնորոշ այնպիսի գծեր, ինչպիսիք են «անճամբ հարստի»-ն, «խոշորագեղ»-ը և «վարար»-ը:

Անի քաղաքի Մայր դիցուհու պաշտամունքի հետ ունեցած երբեմնի սերտ կապի վերաբերյալ ակնառու փաստեր կան: Վարդան Բարձրաբերդցին գրում է. «զքաղաքն Անի, որ կոչի խնամք»[6], իսկ միջնադարյան «Բառգիրք հայոց»-ում կարդում ենք. «*Անիացեալ*-խնամեալ, կամ խնայեալ»[7]: *Խնամ(ք)* բառի բացատրություններից են. «հոգաբարձութիւն, նախահայեաց հոգոյութիւն, պահպանութիւն, հովանաւորութիւն, դարման, գութ, սեր»[8], «հոգատարութիւն, հոգացողութիւն, ջանադրութիւն»[9], «ուշադրութիւն, հոգատարութիւն, հարկաւոր օգնության մատակարարում, միջոցներ, որոնք ձեռք են առնվում հիվանդին օգնելու՝ բժշկելու համար»[10] և այլն: Ինչպես տեսնում ենք, *Անի*-ի բացատրությունն հանդիսացող *խնամք* բառի բերված բոլոր իմաստներն էլ այս կամ այն չափով վերաբերում են Մայր դիցուհուն՝ հեթանոսական Անահիտին: Անկասկած, Մայր դիցուհու պաշտամունքի հնագույն օջախներից մեկը լինելու պատճառով է, որ Անի բնակավայրը կրել է այդ անունը: Մեծավաստակ հայագետ Ղ.Ալիշանը *Անի*-ն համարում է Անահիտ դիցուհուն տրված անվանումներից մեկը:[11] Սրա հետ միասին, երբ ի նկատի ենք առնում, որ Դարանաղի գավառի համանուն սրբավայրն ուներ իր անվան *Հանի* տարբերակը[12] և, որ հայերեն մի շարք բառեր ունեն իրենց նախաձայն *հ*-ով և առանց դրա տարբերակները, ապա, ամենայն իրավամբ, մեր *Անի*-ները կարող ենք համարել հայերեն *հան*//հանի «տատ, մեծ մայր» բառի տարբերակը: Դրանք սերում են հ.-ե. նախալեզվի *an-//*Han- «տատ, հոր մայրը» արմատից: Հմմտ. խեթ. hannaš «տատ» (որից կրկնաբանությամբ Hannahanna դիցուհու անունը), հրգ. ana և մյուս լեզուների համապատասխան բառերը:[13]

Անահիտ դիցուհու հասարակական գործառույթներից էր տնտեսական գործունեության հովանավորումը: Հիշենք դեռևս հեթանոս Տրդատ 3-րդի հրովարտակը, որտեղ նա երկրին և ժողովրդին մաղթում էր «շինութիւն դիցն օգնականութեամբ, լիութիւն պարարտութեան յարդոյն Արամազդայ, *խնամակալութիւն յԱնահիտ տիկնոջէ*, եւ քաջութիւն հասցէ ձեզ ի քաջէն Վահագնէ»:[14] Ագաթանգեղոսի երկում Անահիտ դիցուհին որակվում է հետևյալ կերպ. «*Բարերար* ամենայն մարդկան բնութեան», «փառք ազգիս մերոյ եւ *կեցուցիչ*», «մեծն Անահիտ, որով *կեայ եւ զկենդանութիւն կրէ* երկիրս Հայոց»[15]: Ըստ այսմ, Մայր դիցուհին էր հանդես գալիս հայ հին հասարակության բարիքներ արտադրողի դասի (ներառում էր հողագործներին, անասնապահներին, ավելի ուշ նաև արհեստավորներին և առևտրականներին) հովանավոր աստվածությունների

---

[5] *Խորենացի, Բ, լէ:*
[6] *Մեծին Վարդանայ Բաղձրաբերդցւոյ Պատմութիւն տիեզերական, Մ7, 1960, էջ 117-118:*
[7] *Բառգիրք հայոց, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Ամալյանի, Եր., 1975, էջ 21:*
[8] *Նոր Բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Եր., 1979, էջ 949:*
[9] *Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 2, Եր., 1973, էջ 378:*
[10] *Մալխասյանց Մտ., Հայերեն բացատրական բառարան, հ. 2, Եր., 1944, էջ 272:*
[11] *Ալիշան Ղ., Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 47:*
[12] *Խորենացի, Բ, խը, Գ, խե:*
[13] *Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 33: Т.Гамкрелидзе, В.Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, т. 2, Тбилиси, 1984, стр. 766.*
[14] *Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Եր., 1983, ԺԲ, 127:*
[15] *Նույն տեղում, Ե, 53, Ե, 59:*

դերում:[16] Այս առթիվ ուշագրավ է, որ Մայր դիցուհու պաշտամունքի վայրերն համարված քարանձավները Անիում գործածվել են նաև որպես մթերանոց-պահեստներ և արտադրական բազմատեսակ գործունեության վայրեր:[17] Խոսքը մասնավորապես Անիի արվարձան Իգաձորի մասին է: Լեռն նկատել է տալիս, որ տեղի այրերից «շատերը խանութներ էին: Այժմ էլ, մի հայացքով կարելի է ճանաչել այդ խանութները, նրանք փորված են մոխրագույն կակուղ ժայռերի մեջ, ունեն դարակներ ապրանքների համար... Այս ձորը, իհարկե, միակ շուկան չէր: Այնտեղ, քաղաքի մեջ էլ կար շուկա: Բայց այնտեղ չկար, չէր կարող լինել այնպիսի լայնարձակ ազատություն: Գուցե ավելի գյուղական էր Իգաձորի շուկան: Բայց այստեղ էլ, անշուշտ, խոնվում էին ամեն կողմից եկած վաճառողներ և գնողներ: Այստեղ միայն շրջակա գյուղացիները չէին պարպում իրենց սայլերը, կանգնեցնում իրանց հոտերը»[18]: Ուշադրության է արժանի այն հանգամանքը ևս, որ Անին մայրաքաղաք դարձած Բագրատունի թագավորները, սովորաբար, թե՛ զինվորական գործի փայլուն ներկայացուցիչներ էին, թե՛ մեծ տնտեսվարներ: Երկրորդ դեպքում, ըստ երևույթին, գործ ունենք տեղական հին ավանդույթի շարունակական պահպանման հետ: Այսպես, Սմբատ 2-րդ թագավորը «հացի և գինու շատ պաշարներ ուներ... մեծագործ, գոռոզ թագավորը Անիում խոտի մեծ ամբարանոց ուներ, որ հավաքված էր տարիներով: Հողի մարդ էին ամենքը»[19]:

Հայտնի է, որ հեթանոս հայերի Անահիտ դիցուհու պաշտամունքային վայրերը, վերածվելով քրիստոնեական սրբավայրերի, ձոնվել էին Սուրբ Աստվածածնին: Անիում նրա պաշտամունքի հնության մասին է խոսում նաև Աշոտաշեն պարիսպներից ներս գտնվող այն եկեղեցի-մատուռը, որը կրում էր նրա անունը և հայտնաբերվել էր Ն.Մառի արշավախմբի պեղումների միջոցով[20]: Մայր Աստվածածնի պաշտամունքը տարածված է եղել ոչ միայն Անիի հին քաղաքում, այլև նոր քաղաքում և քաղաքի արվարձաններում: Աշոտաշեն պարսպից դեպի հյուսիս, նոր քաղաքում էր գտնվում 1893թ. պեղված Աստվածամոր եկեղեցին (կոչված նաև «Հոռոմ տիրուհու եկեղեցի»)[21]: Բագնայրի՝ Անիի արևմտյան արվարձանի, վանական համալիրը բաղկացած էր չորս եկեղեցիներից, որոնցից գլխավորը Սուրբ Աստվածածինն էր՝ կառուցված Սմբատ Պահլավունու կողմից 1012թ.[22]: Բագրատունի թագավորների օրոք և հետագայում այս եկեղեցին մեծ հռչակ էր վայելում: Դրա մասին են խոսում Անիի շրջակայքում գտնվող այն անշարժ կալվածքները, որոնք նվիրված էին Բագնայրի Ս. Աստվածածին եկեղեցուն[23]: Ամենայն հավանականությամբ, այստեղ ևս Մայր Աստվածածնի պաշտամունքին նախորդել է հեթանոս հայերի Անահիտ դիցուհու պաշտամունքը, որովհետև, ինչպես Թ.Թորամանյանն է գրում, «այս տեղի հին անունն է Բագնայր, ուր եղել են բագիններ՝ մասնավորապես այժմ գոյություն ունեցող քարայրերի մոտ»[24] և «քրիստոնեության մուտքը բոլորովին չէ ոչնչացրել տեղի կրոնական նշանակությունը, այլ, ինչպես և ուրիշ տեղերում, ծառայեցրել է նրան իր նպատակներին»[25]:

---

[16] *Պետրոսյան Ս., Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, Եր., 2006, էջ 150-153, 166:*
[17] *Լեռ, Անի, Տպավորություններ, հիշատակներ, անցածն ու մնացածը, Եր., 1963, էջ 201,218, 273:*
[18] *Նույն տեղում, էջ 202:*
[19] *Նույն տեղում, էջ 273:*
[20] *Նույն տեղում., էջ 252:*
[21] *Հարությունյան Վ., Անի քաղաքը. Միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմությունից, Եր., 1964, էջ 66:*
[22] *Հասրաթյան Մ., Բագնայր, Հայկական սովետական հանրագիտարան, հ.2,Եր.,1976,էջ 198-199:*
[23] *Լեռ, նշվ. աշխ., էջ 272:*
[24] *Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության, Եր., 1942, էջ 310:*
[25] *Լեռ, նշվ. աշխ., էջ 272:*

Անիում Սուրբ Աստվածածնի պաշտամունքի մասին է խոսում այն փաստը, որ քաղաքի ամենաբարձր շինությունը՝ Մայր տաճարը (Կաթողիկե եկեղեցին), ձոնված էր նրան[26]: Տաճարի կառուցումն սկսվել էր դեռևս Սմբատ 2-րդ թագավորի (977-990 թթ.) օրոք, բայց նրա կառուցումը շարունակելու և ավարտելու գործը Տրդատ ճարտարապետն իրականացրել էր Գագիկ 1-ին թագավորի (990-1020 թթ.) կնոջ՝ Կատրանիդե թագուհու հովանավորությամբ: Լեոն, նկարագրելով անմատչելի այն ժայռաբլուրը, որտեղ գտնվել է հին Անի բերդը, ենթադրում է, որ Անահիտ դիցուհու տաճարը գտնվել է այնտեղ, որտեղ հետագայում կառուցվել է «կարմիր քարերից շինված մի գեղեցիկ եկեղեցի, շրջապատված փոքրիկ մատուռներով»[27]: Ավելի հստակ է արտահայտվում անվանի ճարտարապետ Վ. Հարությունյանը: Նա գրում է, որ այսպես կոչված «Աղջկա բերդի» եկեղեցու «տեղում գտնված շինարարական մի արձանագրությունից իմանում ենք, որ այս ավանդապաշտական տեղում դեռ հայերի հեթանոսական ժամանակներից կանգնած է եղել Անահիտ աստվածուհու տաճարը: Գրիգոր Լուսավորիչը, քանդելով այն, տեղում կառուցել է եկեղեցի: Ավելի ուշ՝ Իվանե և Զաքարե Զաքարյան եղբայրների օրոք (12-13-րդ դդ.), վերջինի տեղում կառուցվել է նոր եկեղեցի...»[28]:

Մովսես Խորենացին Երվանդավանի անվանակոչությունը բացատրում է Արտաշեսի զորքի կողմից Երվանդին այդ վայրից *վանելու* հանգամանքով:[29] Բայց, ինչպես Գ.Սարգսյանն է ցույց տվել, բնակավայրը *Երուանդաւան* կոչվել է ավելի վաղ և կազմված է *Երուանդ* անվանը *աւան* բառի հավելումով. հմմտ. *Տիգրանաւան, Վարդգէսաւան, Արշակաւան*:[30] Ճիշտ է, բնակավայրն հետագայում *Երուանդաւան* անվամբ չի հիշատակվում, բայց Երվանդաշատ մայրաքաղաքից 300 ասպարեզ հյուսիս, Ախուրյանի ափին գտնված Երվանդ արքայի բանակատեղին լինելու էր Անի ամրոցը: Ստ.Մալխասյանցի աշխարհաբար թարգմանության տպագիր տեքստում Երվանդաշատի և Երվանդի բանակատեղիի միջև եղած հեռավորությունը ցույց է տրված «ավելի քան *հարյուր* ասպարեզ»,[31] երբ գրաբար տեքստում «ավելի քան *երեք հարիւր* ասպարիսաւ» է:[32] Գ.Սարգսյանը ճշտում է բանակատեղիի հեռավորությունը. «Երվանդաշատից մոտ 300 ասպարեզ (=շուրջ 50կմ) դեպի հյուսիս, Ախուրյան գետի ափին»:[33]

Երվանդավանի մոտ տեղի է ունեցել մ.թ.ա. 201թ. ճակատամարտը Հայոց թագավոր Երվանդ Վերջինի և գահի հավակնորդ Արտաշեսի բանակների միջև: Ճակատամարտն ավարտվել էր Երվանդի պարտությամբ և փախուստով: Երվանդավանի ռազմավարական կարևորության մասին են խոսում ինչպես նրա ամրոց-բանակատեղի լինելու, այնպես էլ նրա և Երվանդաշատի միջև մի շարք ճանապարհային կայաններով՝ իջևաններով, օժտված բանուկ ճանապարհի գոյության փաստերը: Այդ ճանապարհով էլ «Երուանդ ձիովն իւրով բովանդակ ասպարէզս անցեալ՝ ելանէ ի խանս կարգեալս ի բանակէ իւրմէ ի քաղաքս իւր, հեծեալ ի նոր ձիս հանգոյց ի հանգուցէ փախչել»:[34] Իջևանների սպասարկման մեջ մտել է նաև սուրհանդակների, իսկ այս դեպքում՝ թագավորի, հոգնած ձիերը առույգ ձիերով փոխարինելու գործը: Ճանապարհն, ըստ երևույթին, կառուցված է եղել Ախուրյանի աջափնյակում և նախատիպն է

---

[26] *Լեո, նշվ. աշխ., էջ 153:*
[27] *Նույն տեղում, էջ 267:*
[28] *Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 58:*
[29] *Խորենացի, Բ, խզ:*
[30] *Սարգսյան Գ., Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Եր., 1966, էջ 217:*
[31] *Նույն տեղում, էջ 203:*
[32] *Նույն տեղում, էջ 202:*
[33] *Նույն տեղում, էջ 219:*
[34] *Խորենացի, Բ, խզ:*

ներկայացրել հետագայում Տիգրան 2-րդի (մ.թ.ա. 95-55թթ.) կառուցած արքունի պողոտայի՝ Արտաշատի և Տիգրանակերտի միջև: Երվանդավան-Երվանդաշատ ճանապարհը իր իջևան-կայաններով հիշեցնում է նաև Դարեհ 1-ինի (մ.թ.ա. 522-486թթ.) կառուցած արքայական ճանապարհը Շուշի (Սուզա) և Սարդեսի միջև:

Անի//Երվանդավանը Երվանդ Վերջինին առնչվում է նաև Բագրատունի-Երվանդունի առճակատման դրվագներից մեկում: Բագրատունի տոհմի հակաերվանդյան դիրքորոշումը ակնհայտ էր արդեն նրանով, որ լինելով Հայոց թագադիրներ, Բագրատունիները չեն թագադրել Երվանդ Վերջինին,[35] դրանով իսկ կասկածի տակ առնելով նրա թագավորության օրինականությունը: Դրա հաջորդ քայլը եղել է գահի հավակնորդ Արտաշեսի կողմն անցնելը: Ըստ Մովսես Խորենացու, «Արդ՝ իբրեւ լսէ Սմբատ որդի Բիւրատայ զբօթն Սանատրկոյ եւ զգոյժ կոտորման որդւոց նորա՝ առեալ զերկուս դստերս իւր, զՍմբատանոյշ եւ զՍմբատուհի՝ նստուցանէ ի Բայբերդի, արս քաջս թողլով ի վերայ ամրոցին. եւ ինքն հանդերձ միով կնաւ իւրով եւ սակաւ արամբք գայ անցանէ ի խնդիր մանկանն Արտաշիսի»:[36] Այդ մասին հայտնի է դառնում Երվանդ արքային: Պատմահայրը ցույց է տալիս, թե ինչպես Երվանդ-Բագրատունիներ հակասությունը հետզհետե վերածվում է բացահայտ առճակատման: Նա գրում է. «Յայնժամ առաքէ Երուանդ եւ սատակէ զքաջսն ի Բայբերդի. գերեալ զդստերս Սմբատայ՝ պահէ յամրոցին յԱնի ոչ վատթարապէս»:[37] Հիշյալ Անի ամրոցը Դարանաղի գավառի Անի//Հանին լինել չէր կարող, որովհետև նախ՝ վերջինս գտնվում էր ոչ թե Մեծ Հայքի՝ Երվանդ Վերջինի թագավորության, այլ Փոքր Հայքի կազմում, ապա՝ եթե ընդունենք, անգամ, որ Անի//Հանին Երվանդ Վերջինի օրոք գտնվել էր Մեծ Հայքի կազմում (անհավանական մի ենթադրություն), ապա միևնույնն է. Երվանդ Վերջինը իր բարձրաստիճան գերուհիներին կպահեր ոչ թե իր թագավորության հեռավոր ծայրամասում՝ Դարանաղիում, որն այնքան էլ հեռու չէր Բագրատունիների տիրույթ Սպերից, այլ իր մայրաքաղաքից ոչ հեռու գտնվող Շիրակի Անի ամրոցում:

Թագավորական նստավայրին, լիներ այն ամառանոցային թե՝ ձմեռանոցային, կից հանգստյան ընդարձակ գոտու ստեղծումը եղել է Երվանդունի թագավորների հոգսերից մեկը: Ընդ որում, դրանք նաև շրջակայքի կլիմայի առողջացման և պաշտամունքային կարիքների բավարարման նպատակներ էին հետապնդում: Վերջին դեպքում, դրանց ստեղծումը ուղղակի առնչության մեջ էր դրվում բուսական և կենդանական աշխարհի հովանավոր Մայր դիցուհու պաշտամունքի հետ: Դրանք փաստորեն վերածվում էին արքունի արգելանոց-սրբավայրերի: Այդպիսի մի արգելանոց-սրբավայր ստեղծել էր Երվանդ Վերջինը Երվանդակերտի և Անի-Երվանդավանի միջև՝ Ախուրյանի արևմտյան ափին: Ըստ Մովսես Խորենացու, Երվանդը «Տնկէ եւ մայրի մեծ ի հիւսիսոյ կողմանէ գետոյն (Արաքսի – Ս.Պ և Լ.Պ.), եւ որմովք ամրացուցանէ, արգելելով ի ներքս այծեմունս երագունս, եւ զեղանց եւ զեղջերուաց ազգ, եւ ցիռս եւ վարազս. որք ի բազմութիւն աճեցեալ լցին զանտառն, որով ուրախանայր թագաւորն յաւուրս որսոց: Եւ անուանէ զանտառն՝ Ծննդոց»:[38] Արագավազ ցիռերի առկայությունն արդեն վկայում է անտառին կից արձակ, խոտավետ տարածության գոյության օգտին: Իսկ դա կարող էր լինել նրան հյուսիսից հարող տարածքը՝ Անիի շրջակայքը: Արգելանոց-սրբավայրի անտառի *Ծննդոց* անունը վկայում է, որ պաշտամունքային տեսանկյունից գործ ունենք Մայր դիցուհուն ձոնված սրբավայրի հետ: Հայտնի է, որ Մայր

---

[35] *Խորենացի, Բ, լէ:*
[36] *Նույնը:*
[37] *Նույն տեղում, Բ, լը:*
[38] *Նույն տեղում, Բ, խա:*

դիցուհի Անահիտը հովանավորն էր ինչպես բուսական և կենդանական աշխարհի, այնպես էլ մայրության, մանկածնության և, առհասարակ, բոլոր ծնունդների:[39]

Մայրության հովանավոր դիցուհուն այս արգելանոց-սրբավայրի ձոնված լինելու իրողության արտացոլումն է ոչ միայն նրա անտառի *Ծննդոց* անունը, այլև վերջինիս կից արձակ տարածքի *Մարաց մարգ* անունը: Ըստ Մովսես Խորենացու, «ի վերայ գետոյն Ախուրեան» գտնված Երվանդի բանակատեղին՝ Երվանդավանը, գրված Արտաշեսն ինքն է ճակատամարտի վայրն անվանել *Երվանդավան*, իսկ շրջակա հովիտը՝ *Մարաց մարգ*, իբրև թե «մարերի մարգ»:[40] Այսուհանդերձ, հետագա արձանագրություններում հովիտը կոչված է թե՛ *Մարաց մարգ*, թե՛ *Մարանց մարգ*, որոնց համաձայն, տեղանունը կարելի է ստուգաբանել որպես «մայրերի մարգ»:[41] Ըստ երևույթին, Անիի մերձակայքում գտնված Մարա(ն)ց մարգը իր կարգավիճակով նման է եղել Երզնկայի դաշտի Անահիտ դիցուհու արգելանոց-սրբավայրին: Պլուտարքոսի վկայությամբ, այնտեղ ազատության մեջ շրջել են Արտեմիս/Անահիտին ձոնված սրբազան կովերը (երինջները):[42] *Մարանց մարգ* անվանը իմաստով մոտ է Խոսրով Կոտակ թագավորի ստեղծածն համարվող *Տաճար մայրի* կոչված արգելանոց-սրբավայրի և Խոսրովակերտ անտառի միջև գտնված ապարանքի *Տիկնունի* անունը:[43] Նոր հայկազյան բառարանի հեղինակները *տիկնունի* բառը բացատրում են հետևյալ կերպ. «Ուր իցէ տիկին, կամ տիկնայք, որպէս բնակարան թագուհւոյ»:[44] Բայց *տիկին* նախապես կոչվում էր Մայր դիցուհին, որովհետև նախ՝ բառն է դա ցույց տալիս (*տիկին*//«մեծ կին», ինչպես՝ *տի-այր>տէր* «մեծ այր», *տի-եզերք*//«մեծ եզերք»),[45] ապա՝ մինչքրիստոնեական Հայաստանում *տիկին*-ը մակդիրն էր մայր դիցուհի Անահիտի:[46] *Մարա(ն)ց մարգ* տեղանվան նման «մայրական» իմաստ ունի նաև Երվանդակերտի երկրորդ անունը՝ *Մարմէտ*-ը: Անանիա Շիրակացին Մարմետը կոչում է «ոստան Կամսարականաց» և տեղադրում «յեզր գետոյն, որու Ախուրեանն կոչեն»:[47] Ըստ Մովսես Խորենացու, Երվանդ արքայի դաստակերտի *Երուանդակերտ* անունը փոխվել է Արտաշեսի կողմից. «անունեցաւ դաստակերտն *Մարմէտ*, իբր ի կամաց Արտաշիսի՝ բառնալ զանուն Երուանդայ ի տեղւոջէն»:[48]

Մար-մէտ բաղադրիչներից բաղկացած տեղանվան առաջին բաղադրիչը *մայր* բառն է (հմմտ. եզ. ուղղ. *մայր*, հոգն. ուղղ. *մարք*), իսկ երկրորդը, ըստ երևույթին, նշանակում է «շեն, բնակատեղի»: Տեղանվան -*մէտ* բաղադրիչի հիմքում մենք տեսնում ենք հ.-ե. *mei-d(h)- «ամրացնել» նախաձևը: Վերջինիս *mei-t(h)- տարբերակից է ծագում հայերեն *մոյթ* «մույթ» բառը, որը արմատակիցն է համարվում թրակերեն midne «գյուղ, շեն» (<հ.-ե. *mei-d(h)-) բառի:[49] Ամենայն հավանականությամբ, նույնպիսի ծագում ունեն նաև հայկական *Արտամետ*<*Արտամէտ* և *Արտիմէդ* տեղանունների նույնիմաստ -

---

[39] *Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ.1, Եր., 1971, էջ 903, Г.Вардумян, Дохристианские культы армян. «Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ», 18, Եր., 1991, էջ 107:*

[40] *Խորենացի, Բ, խզ:*

[41] *Սարգսյան Գ., նշվ. աշխ., էջ 226:*

[42] *Plut. Lucull., XXIV (Плутарх, Избранные жизнеописания,т.II, М.,1987, стр.134.*

[43] *Փաւստոսի Բիւզանդացւոյ պատմութիւն Հայոց, Եր., 1987, գիրք Գ, գլ. ը:*

[44] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Եր., 1981, էջ 875:*

[45] *Աճառյան Հ., նշվ. աշխ., հ. 4, էջ 401-406:*

[46] *Ագաթանգեղոս, Ե, 53, Ե, 59, ԺԲ, 127:*

[47] *Աբրահամյան Ա., Անանիա Շիրակացու մատենագրությունը. ուսումնասիրություն, Եր., 1944, էջ 228:*

[48] *Խորենացի, Բ, խզ:*

[49] *Ջահուկյան Գ., Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 61: Թրակերեն բառը կարող էր իր հիմքում ունենալ հ.-ե. *meit(h)- «բնակատեղի» նախաձևը (նույն տեղում, էջ 61, ծան. 45):*

մեռ/-մեղ բաղադրիչները: Սրանցից առաջինը կրած բնակավայրը գտնվում էր Վանա լճի հարավ-արևելյան ափին, իսկ երկրորդը Վաղարշապատ քաղաքի ամենահին անունն է՝ նախորդած նրա *Աւան Վարդգէսի*//*Վարդգէսատան* անվանը:[50]

Երվանդակերտ//Մարմետի առթիվ հիշարժան է նրա խորենացիական նկարագրությունը, որին անդրադառնալուց առաջ հիշենք Մ.Աբեղյանի հետևյալ խոսքերը. «Անահիտ և Աստղիկ սկզբնապես եղել են միևնույն դիցուհու տարբեր կոչումները... Բայց կրոնի զարգացման ընթացքում այդ անուններով պաշտամունքը երկճեղվել է, և Անահիտ ու Աստղիկ դարձել են տարբեր դիցուհիներ: Մինչ Անահիտը դառնում է զգաստ դիցուհի, Աստղիկը մնում է իբրև սիրո և հեշտության աստվածուհի»:[51] Իսկ ահա թե ինչ է գրում պատմահայրը Երվանդակերտի մասին. «*Քաղցր* է ինձ ասել եւ յաղագս *գեղեցիկ դաստակերտին* Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ *գեղեցիկ եւ չքնաղ* յօրինուածովք: Քանզի զմիջոց հովտին մեծի լնու մարդկութեամբ և պայծառ շինուածովք, լուսաւոր որպէս ական բիր: Իսկ շուրջ զմարդկութեամբն՝ *ծաղկոցաց ու հուտարանաց* կազմութիւն, որպէս շուրջ բրովն զայլ բոլորակութիւն ական: Իսկ *զբաղմութիւն այգեստանոյ* իբր զարտեւանանց խիտ եւ *գեղեցիկ* ծիր. որոյ հիւսիսային կողմանն դիր կարակնաձեւ՝ արդարեւ *գեղաւոր կուսից* յօնից դարաւանդաց համեմատ: Իսկ ի հարաւոյ հարթութիւն դաշտաց՝ *ծնօտից պարզութեան գեղեցկութիւն*: Իսկ գետն *բերանացեալ* դարաւանդօք ափանցն՝ զերկբերթիսն նշանակէ *շրթունս*... Արդարեւ *բերրի* եւ թագաւորական դաստակերտ»:[52] Մ.Աբեղյանի վերոբերյալ դիտողության ուղղությամբ ուշադրություն դարձնենք մեջբերման ընդգծված բառերին: Կարծում ենք, որ այդպիսին է ընկալվել ոչ միայն Մարմետ//Երվանդակերտը, այլ նաև հին Անին՝ իր շրջապատը կազմող *Մարանց մարգ*//«մայրերի մարգ»-ով, մանավանդ որ, *մարգ*-ը նախ և առաջ «դաշտ խոտաւէտ, ծաղկաւէտ» է նշանակում:[53]

Հասարակության երեք իրավահավասար դասերից բաղկացած լինելու հնդեվրոպական ավանդույթը այնքան խոր արմատներ էր նետել հայ իրականության մեջ, որ պայմանավորել էր անգամ հայկական բնակավայրերի հասարակական կառույցի եռակենտրոն համակարգը: Շատ տեղերում այն իր ուրվագիծը պահպանել էր մինչև 20-րդ դարի սկիզբը: Հայկական շատ գյուղերի ավանդական կենտրոնում՝ գյուղամիջին, որպես կանոն, գտնվում էր աղբյուրը կամ ամենահարգի ծառը (հաճախ երկուսը միասին): Ինչպես աղբյուրը, այնպես էլ ծառը նախաքրիստոնեական դարերում համարվում էին խորհրդանիշ-առարկայացումները Մայր դիցուհու, որը պտղաբերությունն ու բերրիությունն անձնավորելով՝ հանդես էր գալիս որպես բարիքներ արտադրող դասի հովանավոր աստվածություն: Ըստ այդմ, դրանց մոտ էին տեղի ունենում բնության բարիքների և արհեստագործական արտադրանքի փոխանակում-վաճառքի գործընթացները: Գյուղամիջին էին գտնվում նաև գյուղապետի նստավայրը՝ գյուղի վարչական կենտրոնը, և եկեղեցին՝ հոգևոր կենտրոնը: Մեր դյուցազնավեպի առանձին պատումների համաձայն՝ Ծովինարի երկվորյակ որդիները հիմնադրել էին նախ Սասուն բնակավայրը՝ բարիքներ արտադրողների կենտրոնը, ապա Սասնա բերդը՝ զինվորական դասի կենտրոնը, ի վերջո՝ եկեղեցին կամ վանքը՝ հոգևոր դասի կենտրոնը: Ըստ ամենայնի, այս դեպքում մենք գործ ունենք եռյակ բնակավայրերի (իրենց տնտեսական, հոգևոր ու ռազմական բնույթներով) համակարգի հետ: Նույնը կարելի է ասել նաև Անիի և նրա հետ եռյակ կազմած Մաղազբերդ, Երերույք բնակավայրերի մասին:

---

[50] *Խորենացի, Բ, կե:*

[51] *Աբեղյան Մ., «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ, Եր., 1941, էջ 75:*

[52] *Խորենացի, Բ, խբ:*

[53] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, էջ 217:*

Սրանցից Անի//Երվանդավանը եղել է Մայր դիցուհու պաշտամունքի կենտրոններից մեկը, իսկ որպես այդպիսին նա համարվելու էր նաև Մայր դիցուհու հովանավորյալ բարիքներ արտադրողների դասի կենտրոնատեղի:

Բնակավայրերի Անի-Մաղազբերդ-Երերույք եռյակի երկրորդ անդամը Մաղազբերդն էր: Մաղազբերդի միջնադարյան ամրոցը գտնվում է Անիի ավերակներից մոտ 5կմ հարավ, Ախուրյանի արևմտյան ափին, անդնդախոր կիրճի եզրի ժայռին, որը երեք կողմից շրջապատված է Ախուրյանի ջրերով:[54] Որ միջնադարյան այս ամրոցը ունեցել է իր նախորդը, վկայում է նրա *Մաղազբերդ* անունը: Նրա նախատիպը **Մաղխազաբերդ, *Մաղխազբերդ* է:[55] *Մաղխազ* տերմինը հայտնի է Արշակունյաց դարաշրջանից: Բայց այս տերմինի հնության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ նրա հիմքում ընկած բառը կամ համարվում է ասուրերենից՝ ասորեստանյան աքադերենից, կատարված փոխառություն (<malxazu «տեր, իշխան, թագավոր»),[56] կամ ասորերեն (արամեերեն) բառաբարդ է՝ «հսկողություն անող, դիտող, հետևող» իմաստով:[57] Անկախ այն բանից, թե այս երկու կարծիքներից որն է համապատասխանում իրականությանը, մի բան պարզ է, երկու դեպքում էլ *մաղխազ* («թագավորական թիկնապահ գնդի հրամանատար») տերմինը նախաարշակունյան և, հավանաբար, նաև նախահելլենիստական ծագում ունի: Եթե ճիշտ են մեր արած դիտողություններն ու դատողությունները, ապա պետք է ընդունել, որ *մաղխազ* տերմինն իր հիմքում ունեցող *Մաղխազաբերդ* տեղանունը վկայությունն է այն կրած տարածքում հին բերդի, իսկ նրանում թագավորական թիկնապահ գնդի և նրա հրամանատարի առկայության: Ըստ երևույթին, թիկնապահ գունդը պահականել է այն նույն Օրոնտես// Երվանդին, որը դիադոքոսների պայքարի ժամանակ անվտանգության նկատառումներով տեղափոխվել էր Այրարատ, կառուցապատել էր և մայրաքաղաք դարձրել Արմավիրը՝ զուգընթացաբար կառուցապատելով որպես ամառանոց-նստավայր Անի//Երվանդավանը և ամրացնելով թագավորական ապաստարան Մաղխազբերդը: Այս դեպքում կասկած լինել չի կարող, որ Անի-Մաղազբերդ-Երերույք եռյակի երկրորդ անդամը՝ Մաղազբերդը, եղել է զինվորարքայի նստավայրերից և զինվորական դասի կենտրոնատեղիներից մեկը:

Բնակավայրերի այս նույն եռյակի երրորդ անդամը լինելու էր Ախուրյանի արևելյան ափին՝ Անիպեմզա ավանի մոտ գտնված Երերույքը (Երերոյք, Երերուաց գիւղ): Պետք է ենթադրել, որ IV դ. Երերույքի տաճարի նման մեծ ու հոյակապ քրիստոնեական տաճար ունեցած հետագա գյուղը նախորդ դարերում ավելի մեծ բնակավայր էր լինելու և ունենալու էր համապատասխան հեթանոսական սրբավայր: Այս տեսանկյունից ուշադրություն են գրավում Գառնիի հոյակապ հեթանոսական տաճարը և գյուղի մոտակայքում գտնվող հինավուրց գյուղատեղիի *Երերոնք* անունը:[58] Դրանք նույնպիսի փոխադարձ կապի մեջ էին լինելու միմյանց հետ, ինչպիսի կապի մեջ էին լինելու *Երերոյք* անունը և Երերույքի քրիստոնեական տաճարի նախորդ հեթանոսական սրբավայրը: *Երեր-ոյք* և *Երեր-ոնք* տեղանունների վերջին բաղադրիչները համարժեք են, որովհետև հոգնակի-հավաքականի իմաստ ունեն և նշում են մարդկանց ինչ-ինչ խմբեր: Սրանց **երեր-* հիմքը, մեր կարծիքով, բաղկացած է **երի*-արմատից և *-ար* վերջածանցից: Վերջինս առկա է հայերենի *արդար, կերպար, մոլար* և այլ բառերում և հնդեվ-

---

[54] *Հայ ժողովրդի պատմություն, հ. III, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1976, էջ 377:*

[55] *Երեմյան Ս., «Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298-385թթ.)» քարտեզը, Երևանի համալսարանի հրատարակչություն, Եր., 1979:*

[56] *Адонц Н., Армения в эпоху Юстиниана, Ер., 1971, стр. 400.*

[57] *Մելքոնյան Հ., Ադիաբենի պետությունը և Հայաստանը, Եր., 1980, էջ 137:*

[58] *Ասլանյան Ա., Գրգեարյան Հ., Հայկական ՍՍՀ աշխարհագրական անունների համառոտ բառարան, Եր., 1981, էջ 69:*

ռոպական ծագումով վերջածանց է:[59] Ուրեմն, մնում է պարզել *Երի-ար-ոյք* (>*Երեր-ոյք* հմմտ. *Կաղանկատ-ոյք*) տեղանվան առաջին բաղադրիչի ծագումն ու իմաստը:

Տեղանվան *երի-* բաղադրիչը, մեր կարծիքով, ծագում է հ.-ե. *rē-/*rei- «գոչել, մռնչալ» արմատից, որի *rū- տարբերակից է սերում մեր *ռռնալ* բառը. *rū-n-> հայ. **որում*, որից՝ **որունալ>*որնալ>ռռնալ*: Արմատի այլևայլ տարբերակներն են առկա ազգակից լեզուների հետևյալ բառերի հիմքում. հին. հնդկ. rāuti, ruvati «ռռնալ, մռնչալ, աղաղակել», հուն. ὠρυομα «ռռնալ, մռնչալ, ցավից կամ ուրախությունից աղաղակել», ռուս. рычать «հնչել», անգլ.–սաքս. rarian «հնչյուն», rēon «ղոր», մրգ. rienen «ղոբալ, գանգատվել», լատին. ravus «խռպոտ», rūmor «համբավ, հռչակ»:[60] Այսիմաստ արմատի քրմերի գործունեության ոլորտին առնչվող տերմինի վերածվելու տեսանկյունից հմմտ. հնդեվրոպական միևնույն արմատներից ծագած ռուսերեն орать «գոռալ, բղավել, աղաղակել» և լատիներեն ōrāre «խոսել, խնդրել, աստվածներին աղոթել», կամ լատիներեն mugio «բառաչել» և խեթերեն mugai «աղոթել», mugauar «աղոթք», կամ հայերեն *գոգել* «ասել»>*գոգելով* «գոչելով» և հին հնդկ. vāghāt «աղոթավոր, ուխտավոր, զոհարար» բառերը:[61] Հայերեն *ռռնալ* բառի հնդեվրոպական ազգակիցներից են նաև հբգ. rūnen «փսփսալ», գոթ. rūna, անգլ.-սաքս., հին իռլ. rūn «գաղտնիք» բառերը, որոնք տվել են քրմերի մտավոր գործունեության ոլորտին առնչվող և «ռունական նշանագրեր» նշանակող նույնանուն տերմինը:[62] Այսպիսով, բացառված չէ, որ **Երեր* <**Երի-ար* տերմինով հնագույն Շիրակի բնակիչները նշել են քրմերի ինչ-որ խավի, որոնց անունով է բնակավայրը կոչվել է *Երերոյք*: Սա լինելու էր Շիրակի տվյալ շրջանի քրմական դասի կենտրոնատեղին՝ եռյակ կազմելով բարիքներ արտադրողների դասի կենտրոնատեղի Անիի և զինվորական դասի կենտրոնատեղի Մաղազբերդի հետ: Ուշագրավ է այն հանգամանքը ևս, որ եթե Անին և Մաղազբերդը գտնվում էին Ախուրյանի արևմտյան ափին, ապա Երերույքը գտնվում էր նրա *արևելյան* ափին՝ Անիից և Մաղազբերդից նույն հեռավորության վրա: Իսկ արևելյան ափ//արևելք//արևածագի վայր//աղոթքան:

Այսպիսով, Անին կենտրոնատեղին է եղել Մայր դիցուհու պաշտամունքի, Երերույքը՝ նրա արեգակնային բնույթով որդու, իսկ Մաղազբերդը՝ նրա ամպրոպային բնույթով որդու պաշտամունքների (հմմտ. Ծովինարն իր նույնաբնույթ որդիներով): Թե այս երեք աստվածությունների պաշտամունքը և նրանց ձոնված պաշտամունքային եռակենտրոն համակարգի ստեղծումն ինչքան կարևոր է եղել երկրում դասային ներդաշնակ համակարգի պահպանման տեսանկյունից, ցույց են տալիս Երվանդ Վերջինի շինարարական ձեռնարկումները: Ըստ երևույթին, Անի-Մաղազբերդ-Երերույք եռակենտրոն-եռադասյա համակարգի օրինակով էր նա կառուցել Երվանդակերտ-Երվանդաշատ-Բագարան նույնաբնույթ համակարգը Արաքսի և Ախուրյանի գետախառնի շրջանում: Սրանցից Երվանդակերտը ծառայել է Մայր դիցուհու պաշտամունքի և բարիքներ արտադրողի դասի կենտրոն, Երվանդաշատը՝ ամպրոպային բնույթի աստվածության պաշտամունքի և զինվորական դասի կենտրոն, իսկ Բագարանը՝ արևային բնույթի աստվածության պաշտամունքի և քրմական դասի կենտրոն:[63]

---

59 *Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 234-235: Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. II, Եր., 1975, էջ 90:*

60 *Աճառյան Հ., նշվ. աշխ., հ. 3, էջ 565:*

61 *Նույնը:*

62 *Гамкрелидзе Т., Иванов В., նշվ. աշխ., էջ 803: Աճառյան Հ., նշվ. աշխ., հ. I, էջ 570:*

63 *Պետրոսյան Ս., նշվ. աշխ., էջ 214:*

АНИ И ЕРВАНДИДЫ

___ *Резюме* ___ ___ *С. Петросян, Л. Петросян* ___

В древнем Анн в эпоху Ервандидов (Оронтидов) широкое распостраненне имел культ языческой богини Анаит. Она считалась покровительницей хозяйственной деятельности и соц.сословия производителей древних армян. Ее храм в Ани, находившийся на возвышенности "Девичьей крепости" после принятия христианства был разрушен, а на его месте была построена церковь. Имя Святой Богородицы носил анийский кафедральный собор. И богиня Анаит в Ани имела свою предшественницу. В основе топонима *Ани* лежит и.-е. корень *an-/*Han- "бабушка" >арм. հաՆ, հանի, хетт. Hannahanna (<*hanna-hanna) "имя богини" и т. пр. У древних армян Анаит также носила имя *Ани* (по Г.Алишану).

В Ервандндскую эпоху социальная структура древнеармянского общества обнаруживает тесное соотношение с социальным делением обществ их индоевропейских предков. Трехсословность последнего дала основу далеким предкам ширакских армян основать такие поселеиия-троицы, какими являлись предшественники средневековых поселений Ани-Ервандаван, Ереруйк, Магазберд. Из них Ани был центром сословия производителей, Ереруйк-жрецов, а Магазберд-воинов. Исходя из этой традиции царь Ервандд Последний (222-201гг. до н.э.) в районе слияния рек Аракс и Ахурян построил три поселения: Ервандакерт (центр производителей), Багаран (центр жрецов) и Ервандашат (центр воинов).